Գլխավոր քարտուղարություն

Ժողովրդավարական և քաղաքական հարցերի գլխավոր տնօրինություն

Ժողովրդավարական ինստիտուտների տնօրինություն

ՆՇԵԼ :

COUNCIL OF EUROPE CONSEIL DE L'EUROPE

Նախագիծ

Եվրոպայի խորհուրդ – Հայաստանի Հանրապետության կառավարություն
Գործողությունների Պլան
Կապված տեղական ինքնակառավարման բնագավառի բարեփոխումների հետ

Ստրասբուրգ, ….. …… 2010

Հայաստանի Հանրապետությունը, կարևորելով տեղական ինքնակառավարման համակարգի՝ որպես տեղական ժողովրդավարություն երաշխավորող և ապակենտրոնացված կառավարում իրականացնելու արդյունավետ միջոցի հետագա կատարելագործման անհրաժեշտությունը, հաշվի առնելով սահմանադրական փոփոխություններով, ինչպես նաև 2002 թվականին « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումից հետո անցած ութ տարիների ընթացքում տեղի ունեցած զարգացումներով պայմանավորված իրողությունները, որպես ուղենիշ ունենալով Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը, համագործակցելով Եվրոպայի խորհրդի, այլ միջազգային կառույցների ու կազմակերպությունների հետ և հաշվի առնելով միջազգային փորձը և ազգային օրենսդրությունը կատարելագործելու ու եվրոպական համակարգին ինտեգրվելու նպատակահարմարությունը, իր պատրաստակամությունն է հայտնում հետևողականորեն շարունակել տեղական ինքնակառավարման համակարգի կատարելագործմանն ուղղված իր աշխատանքները՝տեղական ժողովրդավարության ամրապնդման, տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետության բարձրացման ու ապակենտրոնացված կառավարման խորացման ուղղություններով:

Սույն փաստաթուղթը Եվրոպայի Խորհրդի և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև համագործակցության առաջարկ է՝ Տեղական Ինքնակառավարման Բարեփոխումների ոլորտում:

Այն մշակվել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության կողմից՝ Հայաստանի Համայնքների Ասոցիացիայի հետ համատեղ և Եվրոպայի Խորհրդի փորձագետների օգնությամբ: Այն կարող է համարվել որպես Տեղական ինքնակառավարման բարեփոխման Ազգային Ռազմավարություն: Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է տեղական ինքնակառավարման բնագավառի բարեփոխման իր պատրաստակամությունը և դրա իրականացման համար ԵԽ-ից ակնկալում նրա օժանդակությունը: Հայաստանի Հանրապետության փոխվարչապետը պատրաստակամություն է հայտնել ստորագրել այս փաստաթուղթը 2010 թվականի ……-ին:

ԽՆԴԻՐ	ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿ	ՔԱՅԼԵՐ/ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐ
1. Ապահովել տեղական իշխանությունների իրավասությունների և ֆինանսական ռեսուրսների միջև համապատասխանությունը	Նկարագրել տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների ամբողջական և հստակ պատկերը՝ այդ իրավասությունների իրականացման արդյունավետության գնահատականներով:	Նկարագրել տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների ամբողջական պատկերը:	Նոյեմբեր-դեկտեմբեր 2010	Տեղական և ԵԽ փորձագետներ
		Առաջարկել արդյունավետության գնահատման մեթոդիկա:	2011-2014	ՀՀ պետական կառավարման մարմիններ, Եվրոպայի Խորհուրդ, Փորձագետներ, Շահագրգիռ կառույցներ
		Գնահատել մարդկային և ֆինանսական միջոցների համապատասխանությունը:		
		Գնահատել տեղական իշխանությունների կարիքները (աշխատակազմի և ֆինանսական ռեսուրսների առումով) իրենց լիազորությունների իրականացման համար:	2011-2014	
	Հստակեցնել ծառայությունների մատուցման առումով տեղական իշխանությունների կողմից իրականացվելիք որոշակի առաջադրանքները:	Գնահատել նախորդ տարիներին իրականացված ապակենտրոնացման արդյունքում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող նոր ծառայություններն ու իրագործվող լիազորությունները (հարկային վարչարարություն և այլն) :	2011-2014	ՀՀ պետական կառավարման մարմիններ, Եվրոպայի Խորհուրդ, Փորձագետներ, Շահագրգիռ կառույցներ
	Սահմանել պարտադիր լիազորությունների	Գնահատել ներկայումս տեղական իշխանություններին մատչելի ֆինանսական ռեսուրսները:	2011-2014	

	իրականացման կարգերը, նորմատիվներն ու չափորոշիչները:			
	Սահմանել համայնքներին պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման կարգերն ու ֆինանսավորման մեխանիզմները, արդյունքում հաստակեցնել պատվիրակված լիազորությունների իրականացումն ու նրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալները: :	**Կատարելագործել պատվիրակվածլիազորությունների իրականացման գործող կարգերը և ընդայնել դրանց ցանկը:**	**2011-2014**	**ՀՀ պետական կառավարման մարմիններ, Եվրոպայի Խորհուրդ, Փորձագետներ, Շահագրգիռ կառույցներ**
	Ընդլայնել սեփական ֆինանսական միջոցների կառավարման հարցում տեղական իշխանությունների ազատությունը:	**Վերլուծել գործող օրենսդրությունը և մշակել համապատասխան առաջարկություններ: Իրազեկում:**	**2011-2014**	
	Բարելավել համայնքների բյուջեներին պետական ֆինանսական օժանդակության համակարգի արդյունավետությունը, կատարելագործել ֆինանսական համահարթեցման մեխանիզմները՝	**Պետական բյուջեյից համայնքային բյուջեներին տրամադրվող համահարթեցման դոտացիաների տրամադրման մեխանիզմների փոփոխություն այն հաշվով, որ դրանք լինեն ավելի նպատակային, հաշվի առնեն համայնքների միջև առկա օբյեկտիվ տարբերություններ, ինչպես եկամտային ունակությունների, այնպես էլ ծախսային կարիքների**	**2011-2014**	**ՀՀ պետական կառավարման մարմիններ, Եվրոպայի Խորհուրդ, Փորձագետներ, Շահագրգիռ կառույցներ**

	տարբերակելով համայնքներին ցուցաբերվող օժանդակությունը: Իրականացնել տեղական իշխանությունների կողմից իրականացվող ծախսերի օբեկտիվ կարիքների ուսումնասիրության և այլ չափանիշների վրա հիմնված, տեղական բյուջեների եկամտային մասի շարունակական աճն ապահովող միջոցառումներ:	հաշվառմամբ: Պետության կողմից համայնքներին տրամադրվող նպատակային սուբվենցիաների տրամադրման մեխանիզմների կատարելագործում, մասնավորապես «Համայնքների խոշորացման ու միջհամայնքային միավորումների ձևավորման» հայեցակարգով նախատեսված մոտեցումների հաշվառմամբ: Գնահատել սեփական լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալները, պարտադիր լիազորությունների իրականացման կարգերի, չափորոշիչների ու նորմատիվների ներմուծմամբ պայմանավորված դրանց դինամիկան ու մշակել տեղական բյուջեների եկամտային մասի շարունակական աճն ապահովող միջոցառումներ:	2011-2014 2011-2014	ՀՀ պետական կառավարման մարմիններ, Եվրոպայի Խորհուրդ, Փորձագետներ, Շահագրգիռ կառույցներ ՀՀ պետական կառավարման մարմիններ, Եվրոպայի Խորհուրդ, Փորձագետներ, Շահագրգիռ կառույցներ

2. ԲԱՐԵԼԱՎԵԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ	**Վարչատարածքային բարեփոխումների իրականացում** **Համայնքների խոշորացմանն ուղղված գործնական քայլերի իրականացում:** **Միջհամայնքային միավորումների ստեղծմանն աջակցություն, միջհամայնքային համագործակցության խրախուսում:**	**Մշակել համայնքների խոշորացման ու միջհամայնքային միավորումների նոր մոդել** **ԵԽ փորձագիտություն և հանձնարարականներ տվյալ մոդելի և օրենսդրական բարեփոխումների վերաբերյալ** **Տեղեկատվական քարոզարշավ** **Վարչատարածքային բարեփոխման իրականացում**	**2011-2014**	**ՀՀ պետական կառավարման մարմիններ, Եվրոպայի Խորհուրդ, Փորձագետներ, Շահագրգիռ կառույցներ**
	Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարելավում:	**Համատիրությունների ու բազմաբնակարան շենքերի կառավարման ոլորտում իրավասությունների հստակեցում, մատուցվող ծառայությունների արդյունավետության բարձրացում, ազգային ռազմավարությունով նախատեսված միջոցառումների իրականացմանը օժանդակում:** **Խորհրդատվություններ, քննարկումներ:** **Բարելավման համար առաջարկների մշակում, ԵԽ փորձաքննություն, վերանայում**	**2011-2014**	**ՀՀ պետական կառավարման մարմիններ, Եվրոպայի Խորհուրդ, Փորձագետներ, Շահագրգիռ կառույցներ**
	ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ վարչական վերահսկողության համակարգի	**Վերլուծել և առաջարկել փոփոխություններ և գործողություններ, որոնք պետք է իրականացվեն իրավասությունների**	**2011-2014**	**ՀՀ պետական կառավարման մարմիններ,**

	բարելավում, ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով պարտադիր լիազորությունների կատարման նկատմամբ ներքին և արտաքին արդյունավետ վերահսկողության իրականացում: Զարգացնել տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային ծառայողների վերապատրաստման նոր համակարգը, ապահովել հետագա վերապատրաստումների շարունակական ընթացքը, համայնքային ծառայողների ատեստավորումների ու համայնքային ծառայության թափուր պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթների անխափան ընթացքն ու թափանցիկությունը:	աուդիտի հիման վրա, որպեսզի բարելավեն իրենց որակը կամ իրականացումը (ծրագրերի անհրաժեշտություն, ենթաօրենսդրական ակտեր, մարդկային ռեսուրսներ, վերապատրաստում, ներդրումային գրանտներ և այլն) Առկա իրավիճակի վերլուծություն Խորհրդատվություններ, քննարկումներ: Առաջարկների մշակում բարելավման համար, փորձաքննություն ԵԽ-ի կողմից, վերանայում իրազեկում և իրականացում: Առկա իրավիճակի վերլուծություն, քննարկումներ, խորհրդատվություն Համայնքային ծառայության ոլորտում առկա իրավիճակի վերլուծություն: Վերապատրաստման ազգային ռազմավարության նորացում: Վերապատրաստման կարողությունների ամրապնդում Ուսումնամեթոդական ծրագրերի կատարելագործում, համայնքայինծառայողների մասնագիտական հմտությունները բարելավելու նպատակով՝ օրենսդրության կատարելագործում աշխատակիցների հավաքագրում , կարիերա, և այլն: Իրազեկում և իրականացում	2011-2014 2011-2014	Եվրոպայի Խորհուրդ, Փորձագետներ, Շահագրգիռ կառույցներ ՀՀ պետական կառավարման մարմիններ, Եվրոպայի Խորհուրդ, Փորձագետներ, Շահագրգիռ կառույցներ ՀՀ պետական կառավարման մարմիններ, Եվրոպայի Խորհուրդ, Փորձագետներ, Շահագրգիռ կառույցներ

3. ԲԱՐԵԼԱՎԵԼ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱԶԱՆ	**Հստակեցնել տեղական իշխանությունների սեփական և պատվիրակված լիազորությունների սահմանումներն ու դասակարգումները:**	**Օրենդրության վերլուծություն, քննարկումների և խորհրդատվությունների կազմակերպում**	**Նոյեմբեր-դեկտեմբեր 2010**	**Տեղական և ԵԽ փորձագետներ**
	Մշակել ընդլայնված լիազորություններով օժտված ավագանու և համայնքի ղեկավարի համագործակցության, հակակշիռների ու զսպումների լիարժեք մեխանիզմներ:	**«Տեղական ինքնակառավարման մասին» հիմնական օրենքի վերաննայում, ներդաշնակեցում «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքին, ԵԽ փորձագիտություն Իրազեկում և իրականացում**	**2011-2014**	**ՀՀ պետական կառավարման մարմիններ, Եվրոպայի Խորհուրդ, Փորձագետներ, Շահագրգիռ կառույցներ**
	Հստակեցնել ՏԻՄ-երի և տարածքային կառավարման մարմինների փոխհարաբերությունների իրավական հիմքերը:	**Վարչական վերահսկողության իրականացման մեխանիզմների հստակեցում, պաշտոնանկության ինստիտուտի կանոնակարգման հստակեցում, ավագանու հետ փոխհարաբերությունների նկարագրություն**	**2011-2014**	**ՀՀ պետական կառավարման մարմիններ, Եվրոպայի Խորհուրդ, Փորձագետներ, Շահագրգիռ կառույցներ**

ԽՆԴԻՐ	ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿ	ՔԱՅԼԵՐ/ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐ
4. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի արդյունավետ իրականացում (ուղորդվող իրականացում)	Երևանի կառավարման արդյունավետության բարձրացում	Առկա իրավիճակի վերլուծություն Քննարկումների, խորհրդատվությունների կազմակերպում, առաջարկների մշակում, ԵԽ փորձագիտություն Իրազեկում և իրականացում Կոնֆերանս: «Երևանի նոր կարգավիճակը՝ դասեր 3 տարի անց» Ուսումնական այց Երևանի ընտրովի և նշանակովի պաշտոնյաների համար այլ եվրոպական մայրաքաղաքներ. Երևանում եվրոպական մայրաքաղաքների գագաթաժողով եվրոպական մայրաքաղաքների քաղաքապետերի մասնակցությամբ:	2011-2014 գարուն 2012 աշուն 2012	ՀՀ պետական կառավարման մարմիններ, Եվրոպայի Խորհուրդ, Փորձագետներ, Շահագրգիռ կառույցներ